

Purple Kingfisher
1911/10

891. 99

P-16

891.542-7

Կ-68

№ 1.

ԲԱՂԲԻ ԲՕԽՉԷԲԸ

ՆՄՈՒՇՆԵՐ ՄԵՐ ԿԵՆՆՔԻՑ

№ 1-ի յաջորդածը

ՄՕԴԱ Է ՔԱ...

ԿՈՒՊԼԵՏՆԵՐ

ԹԻՖԼԻՍ.

№ 1.

891.99
F-16

um

ԲԱՂԻԻ ԲՕԽԶԷԲԸ

(ՆՍՈՒՅՆԵՐ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՑ).

1001
4347

№ 1-ի յաւելումը

«ՄՈԴԱ Է ՔԱ՛»

ԿՈՒՊԼԵՏՆԻՐ

==

Մ Ի Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Յարգելի ընթերցողներին:

Գրողների շարքը դասելու, կամ փող աշխատելու նպատակով չէ հրատարակում այս գիրքը:

Լսելով շատ և շատ մարդկանց բերանից նոյնա-
նման դանդաղանքը, որոնք ի հարկէ մնում են ձայն
բարբարոյ յանապատիջ, մենք ուզեցինք քիչից-շատից
մխիթարած լինել նոցա և ահա վճռել ենք, պարբերա-
բար բաց թողնել սոյնանման գրքոյկներ, որի նպա-
տակն է թեթև կերպով մտրակել նոցա, որոնք իրենց
կեղևի և պարտականութեան մէջ չեն և կամ թէ ուր են տա-
նելու մեզ այս նորաձևութիւնները, որոնք փոխում
են ժամանակի հետ միասին:

Թէ ռոքան է իրաւացի, այդ ցոյց կտայ գրքի
տարածումը-ն քանի որ բողոքողների մեծամասնու-
թիւնը՝ ի հարկէ հին մարդիք են, դրա համար էլ ընտ-
րել ենք գործածական մի այնպիսի լեզու, որը հարե-
ւան է թէ Տփլիսի և թէ գրական բարբառին:

Երկրորդ օրինակը լոյս կտեսնի, հէնց որ տպա-
գրութեան ծախսը կհասնի առաջինը:

Գ. Փ.

ՄԻՐԵԼԻ ՈՒ ԸՆՄՈՌԸՆԸԼԻ

ՊԱՌԱՒ ԵՕՎԱՆԷ ԶԱՆ! *)

Ստացայ քու դրախտէմէն գրած բարովա-
գիրդ ու հախ Աստծու շատ ուրախացայ, վուր
էտի սաղ սալամաթ ու արեւէին իս:

Լաւ է միտդ իմ էկի, ախպէր, նամակ իս
գրի ու հալ ու ափալս հարցրի:

Իս, Եօվանէ ջան, վինաւաթ չիմ. չունքի
վուչ ադրէսդ գիդէի օրինաւուր ու վուչ էլ էկող
կար էտի, վուր զրգէի:

Ով մեռնում էր, զիփ դժուխքացու էին դուս
գալի ու գիդէի՝ նրանց չէին տուն թողնի քիզ
մօտ, վուր նամակս տային:

Փառք Աստծու, հիմի արեւէյին իմ, վուր
ադրէսդ գիդիմ ու ամսէնը մի ջէր էլա կու գրիմ
քիզ, միր քաղքի թազա խաբարնիրը, թազա մո-
դէքը, թազա սովորութիւննիրը, նիստն ու կացը,
խօսքն ու ջուղաքը, բարով—Աստծու բարին,
վուրին հիմիկուայ միր ջէհէնիրն ու ուսում ա-
ռածնիրը «լուսաւորութին» ին ասում:

Պիտիս թամաշա անի թէ՛ ինչ հանգն է փոխ-
ւի միր Թիփիլիզ քաղաքը, վուր արմընաս. պտիս

*) Պառտ. Եօվանէն, հին ժամանակներում, Թիփիլիզում ապ-
րած մի մարդ է: Այն ժամանակ, երբ դեռ լուսաւոր չէր
տարածւած, նա դէսից զէնից նորութիւններ հաւաքելով և խա-
նութէ խանութ ման գալով, պատմում էր այդ բոլորը և ամէնից
մի կամ երկու կողմէկ ստանալով, ապրում էր դորանով:

տէհնի թէ ինչ խաբարներ է էստի, ինչ ին ա-
նում միւր մինձամարթիքը, դօխտուրները, ատ-
վակատները, վարժապիտները, տէրտէրները, շօ-
ւի տղերքն ու աղջկիւրքը, մարթու տալու բարիշ-
նէքը ու ջահիլ տղերքը, մի խօսքով ամենքը:

Պիտիս թամաշա անի սրանց արարմունքը,
վուր աչքերդ խփիս, պիտիս լսի սրանց ազրն ու
խօսիլը, վուր անգաճներդ ծածկիս ու կանչիս
Գուլարէնց Օսէփի պէս, թէ՛ «հայիփ, հայիփ,
միւր վաղուցայ ժամանակը, ծէսն ու աղաթը,
սէրն ու բարեկամութիւնը, միւր քաղցը մէ թիբա
հացը. էս ինչ է... քանդւի էս թահար լուսաւո-
րութիւնը»:

Միտդ է՛, վուր մէ վուխտ Մասիսէնց Գէ-
վուրքը, ասաւ իսայուն թէ, —մի վառ մաշխալա
ար ձեռիդ, տնէ տուն ման արի ու հէնց ամեն-
քին էլ կու լուսաւորիս, կօսէ:

Հիմիկուան խալիս էլ, միւր մինձամարթիքն
էլ էտէնց ին չալիշ գալի, վուր մենակ փողոց-
ները լուսաւորին, ամա խալիս նամունն ու ա-
բուրը կի ուփրօ ջլիս կտրում ու դէն ին գցում:

Հիմի կու հարցնիս թէ, ինչ է, ինչ խաբար
է էստիդ, վուր էս հանգի ջգրած նամակ իմ
գրում քիդ: Ե՛հ, Եօվանէ ջան..., նամունիւրս
կտրեցաւ, սիրաթնիւրս գեղեր էկաւ, էլ խալիս
էրէսին չիմ կանացի մօտիկ տամ:

Վուրթիւրս, աղջկիւրքս, կնիկս էլ, տճ, դիփ
էլ րազրօնիկացան ու պաժառնացան:

Կօսիս, վինց, ...այ, Եօվանէ ջան, հիմի
մէ-մէկ յիդ կօսիմ իմ դարդն ու ցաւը քիդ, ա-
գրէմց դարդ ցաւի գայ ու դարդու բալի բաղ-
քումը լուսաւորութիւն տուն բերողը ու ինձ էս
օրի գցողը:

Ո՞ւմ գիդիս, կնիկս՝ էլիսաբէդը ինչ ամաշ-
կուտ, բաշուդ ու դայրաթով կնիկարմատ էր. իմ
աչք ու ունքին մօտիկ տուող, ջրիս դադըր գիդե-
ցող, հալ ու ափալս հարցնող:

Էն էլ գիդիս, վուր աղջկիւրքս—Շուշանիկն
ու Սօնէս էլ, ինչ գլուխ պահած, ինչ տանու
մինձացած աղջկիւրք էին. էն էլ գիդիս, վուր
տղերքս—Արշակն ու Սանդրօս, ինչ նամունով ու
դայրաթով տղերք էին, վուր կու մթնանէր թէ
չէ տուն գուքէին շախի շուխով ու տան մէջ
մէտի իխտիլաթ, մէտի ճաշ, մէտի իրիգնահաց
կուտէինք, մէտի նստիլ ու մէտի բօլթա տալ ու-
նէինք:

Հիմի «լուսաւորեցին» քաղաքը. կնիկս գի-
շերայ սահաթի էրկուսին է տուն գալի, աղ-
ջկիւրքս լուսաբացին՝ ու վուրթիքս մէկէլ օրը:

Կու հարցնիք—ինչի՞—Աստուծ վուչ գիդէ
հարցնողի գլուխը:

Էնդուր վուր, հիմի միւր տուն քանդող կլուր
կայ, միւր ջիբը դարդըկող Միմօզա ու Գօրգիջա-
նովի բաղ կայ, միւր գլուխը ջարթող սկետինգ-
քինդ կայ, միւր արունը պղտորող Ապօլօ ու Ռիշի
կայ, միւր աչքիւրք քոռացնող գուլիանիէք կայ:

միր էրէխէրանցը գեւացնող Սանինի լէք-
ցիա-սուղիւր ու աղջկերանց կաշիւ կայ:

Այ, իս ի՞նչ ասիմ էդիսօնին, վուր էս լու-
սաւորութիւնը չէր մօգօնի, թողիւ էր էլի միր
ճռաքուի մումի ու մաշխալի աբով, վուր էս
օյիւնները չսարքէին միր գլխին, վուր խալիի
օջախներումը էլի էն սէրն ու հաւատարմութիւնը
անջնջում էր մնացի:

Եօվանէ ջան, լօթիանա, բեգամաղ չըլիս,
վուր մարտ ամսի դայդի էսէնց շշկուած ու
տակնուվրայ իմ խօսում: Դարդուտ ու ջգրած
մարթու սիրտը խօս գիդիս ի՞նչ կուլի, վուր չէ
թէ նամակ գրիլ, հալա վուր թիքէն բերանը տա-
նելու տիղ էլ, դբա ականջը կու տանի:

Հիմի կու հարցնիս թէ՛ էտ ի՞նչ կլուբ, ի՞նչ
Միմօգա, ի՞նչ Ապօլօ, ի՞նչ փլաւ ու փստան, էտ
ի՞նչ անուանիր է, վուր դուն չիս գիդի:

Այ, հիմի ջարդով գուքամ, դարդս հիդ կօ-
սիմ ու մէքանի ամսումը մէքանի գրով, միր
քաղքի բոխչէքը բաց կօնիմ ու խղճմտանքով քիզ
հաշիւ կուտամ, վունցոր հին մօքալաքէյի:

Վաղուցվայ միր բեզրած ու պարապ վուխ-
տը, դուքնի առաջը տաբուրետկի վրայ, սիպտակ
ու կարմիր լոբիով շար ու քար կուսարքէինք,
եա նարդի, ան դուրաչկայ խաղ կօնէինք, վուր
ժամանակը սպանինք ու ով դուրաչկայ գուքէր,
կալոդի թուղթը տասը ջէր բնթին կու խփէինք,

ան տանուլ տուղին մի ձմեռուկ ու եմիշ առ-
նիլ կուտէիք ու բերաններս թաց կօնէինք:
Հիմի պիտիս տէհնի, թէ, Մուխրանսկու տնիրը
վանց ին գուքի, վունց ին լուսաւուրի, շվէյ-
ցար ու լաքիէք կադնեցրի ու «կլուբ» անուամով
կնքի:

Մէ մինձ զալումն էլ, հարուրից աւել կանաչ
ստոլները դարսած, շարված ին չուրս բոլորքը
միր հին ու նուր վաճառականները, փողրաչիկ-
ները, ինժիններները, դօխտուրները ու վոլը մէկը
ասիմ՝ անուամով մարթիքը, տաքացած ցխրա,
բանկ ու բակարա ին սարքում, ու սաղ օրւայ
—սուտ ու դուրթ ասած, հառամ ու հալալ դա-
դած փուղիրով իրար ջիբըը մտած, գէլի պէս
աչքիքը չռած, ինչկի լուսը խաղում ին ու խա-
ղում, մէկս-մէկու տունը քանդում:

Ո՞վ գիդէ. էտ օրը դրանց պրիկաշիկը, վուր
մէ մանէթ աւել ուզէր, իր հիւանդ մօր, ան բրոջ
ամա դօխտուրի ու դիդի փուղ, հազար ջէր կու
բղաւէին վրէն, քնթները դեվեր կու քաշէին,
էստի կի՝ հարուրանոցներ ին շպրտում, հազար-
ներով տանուլ տալիս ու այիւն ումն էլ չին
զցում:

Մանր վաճառականներն էլ չին ուզում հիդ
մնայ սրանցէմէն ու լէհէքից դուսը վուտը ձքելով
չէն ին գրում, տանուլ տալիս, ու վիրջը չա-
բէն ի՞նչ, վիվիսկի վրայ էլ բիվշի ին գրում...

էտ հալբաթ հէրիք չէր, սրանց կնդդիրքն

էլ բռնաւոր պէս մի բան, մի զաբաստովկա սար-
քեցին ու *равноправие*—թէ ինչ զահուումար է,
էտ ուզեցին:

—Մինք էլ, ասում է, մարթ ինք, մինք էլ
արուն ունինք, միր սիրտն էլ է ուզում, ասում
է, քէֆ, կարտ, բանկ, լոտո, շամպանսկի, լէկու-
րի, տանցի, զող ու շիքաստի:

Ուզեցին, ախպէր, ու դուս տարան էլ
իրանցը: Թողին էրէխէրքին քոծի ու բջի աբով,
ու հայդէ կլուբ: Խաղում ին, ինչ խաղում,
տանց ին անում ինչ թաւուր, վուր շշկլված ու
արմըցած իս մնում:

Прошу «познакомица»-ին խօսել վիրշ չկայ:
Մէ նմուտ կնդադ հիդ մէ չինովնիկ իս
տէհնում, մէկէլ նմուտին մի ափիցէր, քիչ էդ-
նէն մէ վարժապիտ, յեդով պրիկաշչիկ ու սն-
տանէն գիդէ թէ էլի ում յիդ...

«Քա, Սալօմէ, չիս գալի՞ էսօր սաբրանիա,
սեմէյինի վեշեր է»:

—Քա, էլ ինչ հարցնիլ գուդէ, ումից իմ
պակաս, վուր ջուգւիմ: Դրգիլ իմ կաբուկնեքիս
վրայ ուղիւն շինիլ տամ, հօրէս կու բերին ու
կու հս զուրիմ:

«Փուղ շատ բի հիտդ. կուլի էսօր էլա տա-
նինք լոտօումը»:

—Օհ, իրիք մանէթից աւել չկանացի իրի-
գուն ծկէցնի մարթուս ջրբիցը, փանդումը չէր
բանը: Ի՞նչ լաւ կուլի, վուր տանինք:

«Թէ տանինք, էնդիէլէտ իրիգնանաց ու-
տինք բուֆէտումը—սազանդրով»:

Այ, հիմի էս հանգն ին խօսում էրէգւայ նա-
մուսաւուր, ամանչկուտ Փէփէլն ու Սալօմէն,
վուր սուաջ իսկի հարկնի մարթուն էլ չէին է-
րկում ու հիմի չիքիլի հիդ կարգէթ ու ծակծկած
չուլքիք հաքած, ձեռին լօրնէտ բոնած, զուքւած
ու զպլուած, բազմած ին կլուբի զալումը՝ կնա-
օանց Փէփէլի կողքին Վարթիկէնց Սօսօն, Ճանջ-
ուտողանց էլիսաբէդի հիդ—Սէյլանէնց Գաբօն,
Արամակլիսանց Թալալի կուղքին Բաղմէնց Վա-
լօդիէն, ու արխէին՝ իրար կոխքը տաքացնելով,
վուտը վուտի վրայ դնելով, կարդօնի վրայ
լօբիքը դարսելով, ճղաւում ին ինչկի լուսը—
«չետիրնացէտ, դվօյիկա, բատէբի ու տրօիկա, վօ-
սեմ ու սեմդիսիատ դվա, —Խախօի ասելունը չըլի
«Այ, չո՞ւ ու ցա՞ւ... ու ամի՛ն, հա»:

Հիմի քաղքումը խօսել հէրիք չէր, հաւաքար
էլ սարքեցին ու էնդէդի կնդգիրքն էլ, գողէնքնիրը
ծախծխելով, մէ-մէ ձէռք շուր ին կարիլ տւի, ու
էրէխէրքը տանը, պղինձ ու քափկիրը լանալու,
բադի բմբուլը ննդրելու թողած, նստոտած ին
էնդի: Ի՞նչ սրանց բանն է կլուբը, ու թէ
հարցնում իս, ասում ին թէ՛ «մօգա է ու լու-
սաւորութիւն»:

Տօ, էն օրը, իս ու Բարխուդարէնց Եագո-
րը, գնացիլ էինք բատանիցկի գօրէն քիչ սէյիւ
անելու: Ինչկի Սօլօլակի ճամփովը դիվիր էկանք

ու օղորմած կէնայ Ամաղլէրի ժամումը մէ իրիք ջէր խէչ հանեցինք, կամաց կամաց գալով, սահաթի 9-ին տուն հասայ, տեսնում իմ ջէր աղ-ջրկիրքս տանը չին: Հարցնում իմ, թէ — ո՞ւր ին, կնիկս թէ, „սկետինգ-ըինկում սլլալու ին գնացի“, կօսէ:

— Ի՞նչը, ասի, վո՞ւնց թէ սլլվալու, աս, ես սկետինգ ըինգը վո՞ւրն է:

Հախ Աստուծու ջիգրս էկաւ:

«Էտ թագա մօգա է, վուր վուտների վրայ չարխիր շինած, սլլում ին, վէրի կարմունջից քիչ վերիւր», կօսէ:

Հարաքաթիցը ննգած ու դաթրած, կաբիս ու գդակիս թողը չոթկով սըրփեցի ու գնացի կօնկով էտ տիրը:

Ուզում իմ մտնի, ասում ին — բիլէթ:

«Աղջկանս իմ ուզում», ասում իմ:

Ասում ին — բիլէթ:

«Հօրէս դուս գուքամ», ասում իմ:

Ասում ին — բիլէթ:

Չարէս ինչ: Վիկալա մի տաս շաանոց գցեցի առաչը, տեսնիմ էրկու շահի խուրդա ին տալի ու մէ ջուխտ էլ ինչվուր պուճուր ակններով վուտնամանի պէս էրկաթնիր:

Վունցոր էլաւ հասկացրի, վուր արչկանըս իմ ուզում գթնի, էտ թողի ու բարցրացայ վերիւր: Ձէր հենց էտի, մի շօլի աշկերտին ծեծելով պօլիցա էին ասնում,

վուր էտ գօրգօլաճներից մէ ջուխտը թուրմէ ուղումէ ծլկեցնի ու փախչի:

Դէդի ջան. ի՞նչ տէնայ... Մէ մէյդան տիդ, ցէմենտ գցած. էնէնց է մուսով իստըկած ու պլպլեցրած, վուր հալիլի պէս էրէսարբդ մէջն է էրեւում. վուտդ չիս կանա վրէն դնիս, էնէնց իս սլլում:

Իրիք բսանի չափ տղէրը ու աղջկիրքն էլ, վուտներին չարիս ու գօրգօլաճնիր զայմէցրած. էնէնց ին վազ տալի, վուր էքստըրնի պօեղը չի կանայ նրանց հասնի: Պտուտ ին գալիս տղա ու աղջիկ, մէկս-մէկու ձեռքիրը բռնած, մէկէնիւրը պօղրուչի արած: Տեսնում իմ ու գլուխս թափ տալի. վո՞ւնց գթնիմ իս աղջկաս. թէ բղաւիմ, «Շուշան, Սօնա», — ամուլթ է:

Էտու փքրումն էի, վուր այ, էս իմ Սօնէս էլ գօրգօլաճը վուտին, մէ տղի ձեռը բռնած, անցաւ առաչովս... արա վո՞ւնց կու հասնիմ: Տեսաւ թէ չէ ռանգը գնաց, վուտը սլբւից, վեր ընգաւ, թէձօն խփից ու վուտնիրը վիբաշից: Մէկէնիւրը ծիկա տուին, ծիծաղեցին, մասխարա գցեցին, տղերքն էլ վրայ թափւեցին, միթօմ պլտի վիկացնին, իրանք էլ վրէն ննգան, հայ դէս հաց դէն, վիկացրին ու բերին իմ կուռը:

Վուտի վրայ չի կանում կաղնի. թէձոն դու է ննգի, սիրտը գնում է ու տղէրքն էլ, միթոմ շուռ ին բերում, խան կծում ին ու խան կմշտում: Նամուսս դեմեր եկաւ, ամօթուց մեռայ:

Հարցնում իմ Շուշանիկը *հըր է*»։ Ասում է, —
գուլիանիումն է, Միխայիլովսկի քուչի վրայ։

Ըհ, սիրտս էլ չհամփիրից ու մի լաւ, պրիս-
տավուլի սիլլա թաւազա արի։

Էս վուր տէհան էտ տղէրքը, «Հը, հը, խէ-
լի փափաս, ինչ պրաւա ունիս, վուր աղչկադ
ծեծում իս» — ասում է, ու ուզում էին վրէս ընդ-
նին ու բմբլին։ Կու ծեծէին էլ, թէ վուր ջուղաբ
տայի։ Ամա, ասի, շառիցը ռադ ըլիմ, մունչ կա-
ցայ. էրկու շահի բախշեցի ստօրօժին, Փայտօն
բերիլ տուի, նստեցրի աղջկաս մէջը ու շլապէն
ձեռիս բռնած բերի տուն։

Էստի մէ լաւ շշպրեցի, բիաբուր արի պատ-
ւական կնգաս, — թէ-հըր իս թողնում էտ թահար
տիդ աղջկադ. եա ինչ միւր լայիդ բան է, ասի.
կնիկս թէ՛ «մողա է ու լուսաւորութիւն է», կօսէ։

Արի ու ջուղաբ տու։ Գնացի Բաջիաշվիլուն.
բերի ու էտ լուսաւորութենից ինձ քսան ու հինգ
մանկ. թով ազատից ու աղջկաս վուրը տիղը գցից։
Ամա էս սկետինգ-ըինգի լաւ, մազալօ խաբարնի-
րը իժում կու գրիմ քիզ։

Հիմի, տեսնում իմ շուտով գիշերուայ կէսը.
կուլի ու ջէր Շուշանս չկայ. — Գուլիանիումն է,
միտս էկաւ Սօնի ասածը։ Վիկացայ, գդակս թափ-
ուի, նստեցի կօնկի պասլէդնի վազօնումը ու
գնացի Միխայիլովսկի քուչա։

Բախիցին վուր հասայ, տէսայ մի ինչոր

բաղ, լուսաւորած, փանարնիրը վառած ու
դռանն էլ դէսէտնիկնիր կաղնած։

Էս է — վուր կայ, ասի, ու տուն մտայ դէ-
մուդէմը։

«Բիլէթ Էստ»-էստի էլ շվէցաըը հարցրից։

— Վան, պօստոյ դան, մօի դօչկա դդէս պրի-
ջօլ, նադա բրատ դօմա. սեստրա ուպալ նա սկե-
տինկ-ըինգ, ասում իմ։

Նիլգիա, բիլէթ, ասում է։

Չարէս ինչ, Մօդեցայ ստօլի մօտ նստած աղ-
ջկան թէ՛ — բիլէթ տւէք։

Հինգ շահիս առան, մէ բիլէթ տւին ու տուն
թողին։

Տուն գնամ, ինչ տեհնիմ։ Տէր Աստուծ. էլ
ասիդ գցելու տիդ չկայ։ Խառնոտած խալիս, աղջիկ,
տղայ, մինձ ու պուճուր, վրացնակ, ռանակ, բօլ-
թա ին տալի էրէխէքը ձեռին, մէկուս-մէկու կոխ
տալով, միթոմ — ռանակ խօսէլով ու թողի մէջ խիղ-
տուելով։ Անց իմ կենում, աչքիրս չուրս առած,
չուրս բուլուրբս մտիկ իմ տալիս, ամա չէ — Շու-
շանս չէ էրևում։

Ճանանչ օմբին էլ չկայ, վուր հարցնիմ թէ՛
հըր է։ Աչ իմ մտիկ անում, ինչոր լատարիի
բիլէթ ին հանում, ձախ իմ մտիկ տալի — ինչ
որ ձիաների սկաչկա ին խաղցնում, ներքիջի իմ
գալի — դուխաւոյի մուգիկէն է անգաճս տանում,
վերին իմ գնում — սազանդարն է ծւում։

Չկայ Շուշանս. էստի էլ չկայ։

Աղջկերբը, ետդ տղերքի հիդ պողրուշկի ա-
րած, քաղցր մասլահաթի մէջ, դիպչում ին կող-
քիս ու կարգօն թէ փարգոն, ինչ վուր բան ին-
տսում ու անց կենում:

Վունցոր էլաւ, աչքովս ննգաւ միր հարեան-
դալար Խէշօի աղջիկը, մի ինչոր կակարդավուր
չինոփրիկի հիդ: Հարցրի թէ—Շուշանս ուրէ:

«Վիրիւն է ման գալի», կօսէ:

Խալխին բոթբոթելով անց կացայ, տեսնիմ,
Շուշանս մի ինչ որ աղջկայ ու մի տղի հիդ բոլ-
թա է տալի:

Թաքուն էղնէն էլայ, թէ, տիսնիմ ի՞նչ ին-
չինում:

Մտիկ իմ տալի՝ ճամփի էրկու կուռն էլ
դաստա-դաստա տղերք կաղնօտած, ձեռներին
թղթի տոպրակ, մէշը ինչոր մանր ռանգէ ռանգ
թղթի կտորտանք ածած, մուճով հանում ին ու
աղջկաս էրէսին-շրխկ, թաւագա անում:

Նա աչքերը խփից, ուզում էր թղթիւր թափ-
տայ, վուր մէկէլ կոնից, ուրիշները-շրխկ, ու էլի
էրէսարքին:

Վայ, էս է, հիմի աղջիկս գոնդիկը կուխիէ
ասի սրանց գլխին ու իս էլ մուշտին հազրեցի,
վուր աղջիկս նրանց գլուխ տւից ու «մերսի» ասից:
Իս մընացի բերանս բաց:

Վա՛, քինթ ու պրունգս ջարթին. էրէսիս աղպ-
ածին ու իս կի շնորակալութին յայտնիմ: Գամօ-
ցանա է, ու գագէթ գցելու բու արիւր:

էլի ինձ պահեցի. ասի, տեսնիմ վերջը ի՞նչ
է ըլում ու գնացի թաքուն էղնիցը:

Տեսնիմ, էն տղէն տարաւ սրանց մէ կուռ-
ճուլումը ու ըսկսում է սիլի բիլիք անիլ:

Վուր չըղաւեցի մէբաշ—«Շուշան», աղջիկս
լեղապատառ ըլաւ. մօդ վագեց թէ,—Մամի ջան,
չարդ տանիմ, էստի ձէն չհանիս, վուռչիչ չա-
սիս, թէ չէ ամօթու գեղինը կու մտնիմ, ասմէ:

Ի՞նչ պիտի անէի... Առաջս գցեցի ու ճան-
փին փնթփնթալով էկանք, հասանք տուն:

Տուն մտանք օթախը թէ չէ, աբա, գագի-
խարիան. հանեցի կաբէս, վիկալա մինձ մաշէն
ու մէկ թէ էրկու, մէկ թէ էրկու, տուր հա տուր
մէջքին:

«Մամի ջանի» ձէնը, հիդ մէկէլանց էն գու-
լիանէն էր գնում: Էլի անիծած կնիկս մաշէն
խլից ձեռիցս, բոթից էն կուռը թէ,—Ի՞նչ է վուր
գնացիլ է. լուսաւորութին է, կօսէ:

Ա՛խ, լուսաւորութին, վուռ ու փուռ ըլիս
դուն, հը՛:

Պառկեցի, վուր քնիմ, համա ի՞նչ... մտքու-
մըս հազար—բաբաթ բանիւր է անցկենում...:
Վա՛, ախար հիշտ բան է՞, ախպէր, անումիս էդ-
պէս բեղնամ անիլը: Ջէր էսօր վուր աչքովս էտ
տեսայ, ո՞վ գիդէ ուրիշ վուխտ ինչիւր չին ա-
նում...: Սուրբ Սարքիսի ու Սուրբ Կարապիտի
շկօլի մասկի տակ, ինչ աչքակապութիններէ ին ա-
նում...: Բաս էս օրէնք է՛ ես սարքելու բան է՛:

Գիշերով աղջիկս լուսաբացին գայ, թէ ինչ է
— լուսաւորութիւն է:

Մախլաս, վունցոր էլաւ լուսապաւ, համա
տեհնիմ մեհնակ Արշակն է տանը, էն էլ պառկած
է ու կողքին էլ սիֆօնի շուշա ունի դրած: Հար-
ցնում իմ թէ— ի՞նչ է, ի՞նչ խաբար է, թէ— բէքէփ
է, կօսէ:

Հարցնում իմ— Սանդրօն ո՞ւր է:

— Զկայ: Դէ արի ու քաջքիրդ մի մօդ անի:
Ի՞նչ պիտի անիս, եա վոճըդի պիտի զթնիս:

Գուրծի ուշքն ու հարաքաթ վուր էլ չունէի,
անց կենամ, բալքամ ինքը Սանդրօն, եա նրա
համսոններից մէկին ռաստ գամ, ասի:

Քաղաքը ճոելացած է, Եօվանէ ջան:

Վոճըդի է՝ էն միւր դրօշկէքը, գաջի պօղոս-
կէքը, էրկաթի ակնիրով ֆայտոնիրը, դիլիջան-
ները: Հիմի չուրս կոնէդ տրուբէք ին փչում ու
գնալիս խան աչ, խան ձախ պիտիս մտիկ անի,
վուր եա աւտօմօբիլի, եա փոշտի, եա տրամ-
ւայի, եա սամակաթկի տակը չընգնիս:

Այ, էտ հաւնում իմ, դրուստ է, լուսաւո-
րութիւն է. ամա էտու վրայ իժում կու խօսիմ
քիդ հիդ եաքա գրով:

Մտիկ իս տալի խալիսին... Վուչ ուսում ա-
րածին իս ճանչնում, վուչ անուսումին, վուչ
փուղաւորին ու վուչ էլ անփուղին: Ամենքը մէ
տէսակ գուքւած, մէ տէսակ ցիլինդը ու շլապէք
ծածկած... էտ էլ ասինք հաջաթ չէ, լաւ է ու մա-

քրութիւն է. ամա էս աղջկերանց մօդէքը, ի՞նչ
զահրուամար է:

Մտիկ իս տալի, նրանց գուքսին ու շնուր-
քին, Եօվանէ, ու ուզում իս գլխիդ խփի, վայ տայ,
թէ՝ էս ի՞նչ է, էս ի՞նչ օրի ինք հասի:

Ախպէր, աղավարի ու լազաթի շուրն ու
ձիւքը թողած, տարէնը էրկու ջէր մտիկ թէ,
ի՞նչ թահար բանիւր ին մոգոնում, ի՞նչ թահար ին
հաքնուում, վուր իստակ մայմունի հանգն ին
դառնում:

Ի՞նչ անիմ. վոճնց գրիմ: Աչքովդ պիտի տեհ-
նիս, վուր ծիծաղդ ու ջիգրդ էլ հէնց, մէտի գայ:
էլ ամութ չկայ, Եօվանէ ջան...:

Դօշն ու վիզը բաց. դէրիէն կարճ. բաց տուփ-
լին. բարակ չուլքի— վուր մսիւրը աշկարա էրև-
ում է, թեքիւրը տկուր, շլապէն եքա՝ թաբախի
նման մինձ, վուր էրէսարքը թէ ուզենաս տեհնի,
պիտիս պպի ու տակիցը մտիկ տաս: Մէջքը
կարգէթով բլիթի նման բարակէցրած, դէրիի բո-
լորքը— մութաթի նաօճի պէս էնէնց է կապ ու
հուփ տուած, վուր չին կանացի ման գայ, (վազ
տալը խօմ դադաղա է). չին կանացի կօնկումը
դէւէր գնայ ու շնուրքով նստի:

Քամակը զլած, ծծիւրը հուփ տուած, մէ խօս-
քով, հէնց գիդենաս շուրը վրէն զալիւրով ին ածի
ու դուս բերի:

Աբա սա օրէնք է, սա նամուս է, լուսա-
ւորութիւն է, թէ՞ աննամուսութիւն ու լրբութիւն

է: էլի լաւ է, վուր Տօլստոյին սաղ չէ, թէ չէ նա, վուր բաց արած դօշի վրայ կուռում էր ու գօրօդով կանչում... Հիմի խօսմ էնպէս բան կու գրէր, վուր հալա իրա գեղիցն էլ դուս կօնէին:

Այ, էտ փասօնի ին հիմի ման գալի միւր պատւական աղջկիւրքը, էրէսը կրասկով կարմրեցրած, աչքն ու ունքը սիւցըրած, մագերի մէջ հազար բաբաթ մաւթուկներով մազիւր աւելցրած, ձեռներին կաշւի հաբգա բռնած— ջնուղների դաւալի պէս, անցին կենում ու էդնիցն էլ ջահէլ տղէրքի ու տղամարթկանց «չէնի ճիրիմ է» ու ախն ու վախը հիդը տանում:

Հալա ջէր մարթիք էլ կան, Եօվանէ, վուր իրանց կնգայ ու աղջկերանց համա էլ կարիլ ին տալի, հաւնում ու հագցնում ին ու դուս բերում, հիդը բօլթա տալիս:

Վայ ֆալմք, վայ բիդաթ-բիդաթ:

Էլ չկանացի մտիկ տամ սըանց, էրէսս շուռ տւի ախպէր, ու տան կուռն էկայ:

Մտայ տուն, տեհնիմ, կնիկս ու աղջիկ Շուշանս, ինչ որ կտուր թախկացրին ու բօխչէն վրէն ծածկեցին:

Սրտումս խային ննգաւ: Դրուստ է, մարթ խօսմ չէր ըլի, համա ինչ որ բան պիտի ըլէր, թէ չէ բօխչէն ինչի կուծածկէին:

Սպօրի մտայ թէ— ուզում իմ տէհնի, ասի:

— «Ձէ, անմիդ բան է», ասում է կնիկս:

Հայ դէս, հայ դէն, խլեցի՝ տեհնիմ ինչ որ

ճախկաւուր դէրիացուի կտորեմէն կարած, շարւալ:

Միդա քիզ, Տէր Աստուծ:

«Սա ինչ է, ա կնիկ, հումն է»:

— Թագա մոդա է, հիմի աղջկիւրքը էտ պիտի հագնին, կօսէ:

«Չարւալ, տօ»:

— Ի՞նչ անիս, վուր մոդա է, կօսէ...

Վա, աչքերիս ձեռը քսեցի, վուր տեհնիմ, էրազումս խօսմ չիմ, համա չէ: Նստեցի, վուր մի քիչ ուշքի գամ, մութաքէն էլ դէսը բաշեցի ինչէ գլուխս վրէն դնիմ, վուր ուէտիքս անց կենան, տեհնիմ մութաքի տակից, իմ կաբիս հին վէն շարւալին կնիկս վրայ ննգաւ ու ուզում է թախ կացնի:

Վրայ ննգայ, խլեցի ձեռիցը, տեսնում իմ — շարւալս քանդիլ ին ու տօտիքն էլ նաօնով նիդացրի:

«Ա. կնիկ, սա էլ ի՞նչ է», ասի:

— Էտ էլ ինձ համա է, կօսէ:

«Բիզ համա»... արա, Եօվանէ ջան, գիդիս էլի. վիկալա մութաքէն ու մէկին թէ էրկուսին, մէկին թէ էրկուսին, էնքան տւի, վուր մութաքից բուրթը դիփ դարդըկից ու օթախը թոզով մէկ էլաւ:

Հարաքաթիցս էլա ու թախթի վրայ վէր ընգայ:

Դիդիմ, Եօվանէ ջան, լաց կուլիս, կու ափ-

սոսանք ինձ, համա էլ ի՞նչ փայգա,—լուսաւորութիւն է:

Կնիկարմատնիրը հիմի պիտի շարւալ հաքնին, փողոցնիրը ման գան ու մաղաղիէքումը ծառային, մինք էլ, հալբաթ, միր կնանոնց իւփկէքը հաքած, պիտի մնանք տանը, ամաննիրը լանանք, շիւափաւ ու լոբի էփինք ու հիգն էլ երքինք:

Լուսաւորութիւնը արից,

Վուր կնիկըս շարւալ կարից,

Աղջկիրքս տուն չին գալիս,

Ինչկլի լուսը ման ին գալիս:

Է՛հ, Եօփանէ ջան, ի՞նչ լեզու պիտի ըլի, վուր հիդ պատմէ միր թագա խաբարնիրը, եա ի՞նչքան թուղթ պիտի ըլի, վուր տիղաւուրէ բոլորը:

Ջանդաբեզար իմ էկի շատ կուելուց, շատ ուշունց տալուց, ամա ո՞ւմը կու հասկացնիս:

Կամաց-կամաց, Աստուծու օղորմութէնով ու մէկուսմէկուն մտիկ տալով, միր կնգդիրքը տկուր էլ կու ման գան, թէ ինչէ,—մոդա է ու լուսաւորութիւն է:

Էտ դարդն էր, վուր պատմեցի միր Ջանդուկեւանց Ստեփիկօին, դուն խօմ լաւ կուճանչնաս նրան: Էլի էն անդարդ, դարդիմանդ, խոսող ու հանաքչի է մնացած: Նա թէ—էդ ի՞նչ է, արա արի ի՞նչ շանց տամ, ասում է:

Նստացրից կօնկա, տարաւ ինձ դրուստ վուր լուսաւորած մէ շինութիւն: Մօղեցաւ մի

քութկին, վիկալաւ էրկու բիլէթ ու տուն տարաւ զալը, ուր խալիսը լիքը, մտիկ էին տալի ինչոր թամաշին:

Ամիրիկի կտուրի վրայ, ինչ քաղաք ասիս, ինչ մարթիք ման գալիս—նստելիս ասիս, Ֆայտոն, պողոսկայ, պօէզդ, ծով, ցամաք, պարախօդ, դիփ կենդանի, աչքիդ առչիւն է:

Իսկ վուր լուսաւորութիւն, այ սրան կօսիմ:

Դուն արխէին նստած, ուրիշ տէրութիւնների քաղաքնիր ու մարթիք իս տէհնում ու արմնում իս մարթու շնուրքի ու ուսումի վրայ:

Ամա քիչ էդնէն, Փլէյտէքս էլի աշլա արին:

Տօ ինչ վուր մի աղջիկ դուս ընգաւ ցափ տկուր, բոբլիկ վուտով, օցը շըլնքին գցած, ծըմըւում է ու ծումուում:

Իս ամօթու աչքիրս գեղնին գցեցի, նա կի իր աղչիկ տէղովը վուչ ամաչում էր ու վուչ քաշում: Խան մէջքն էր դէմ անում ու խան դօշը:

Շկօլի ու գիմիագիի տղերքն ու աղջկիրքն էլ ուփրօ առաջ վազեցին, վուր լաւ մտիկ անին, իս կի աչքիրս ներքիւ գցած ասում իմ թէ՝

«Ստէփիկօ, ամութ է, գնանք»:

—Ձեր էտ ինչ է, լաւիրը իժում կուտեհնիս, ասում է:

Դրուստ վուր, նա դուս գնաց թէ չէ, տուն էկան տասն էրկու աժդահա-ջանավար աղջկիրք. փութանոց թևերով ու բարձաղներով ու մի ճի-

դաօբա, մի կպչիլ սարքեցին, վուր արմըցած
մնացի:

Թռչում ին մէկուս մէկու վրայ, վուտիցը
բռնում, շուռ տալի, ղիրամալէք սարքում...:

Է՛հ, թափ տւի գլուխս, թքեցի գէգնին ու
դուս էկա դուս, վուր բրազիքս բամու տամ:
Տեանիւմ, Ստեփիկօն էգնէս ըլաւ, թէ—ո՛ւր իս
շտապում, ի՞նչ կայ էստի չարանալու, ասում է:

«Տօ, ի՞նչ կայ, վո՛ւրն է. սա օրէնք է: Էլ
միւր ջանէլ տղերանցը վո՛ւնց ստինք, վուր գի-
շերնիւրը տուն չին գալի:

Էտ ի՞նչ շանց տալու, ետ ի՞նչ սարքելու
բան է, ետ էտ ո՛վ է մոգոնի—դրա մոգոնողի
կինծին կոտրէ Աստուծը:

Լուսաւորութիւն:

Ձէ, ախպէր, էգթահար լուսաւորութէնին
իս հօքով ու մարմնով պրօտէստ իմ անում ու
էստու էգնէն ինչ զօռ ու շնուրք ունիւմ, պիտի
բանիցնիւմ ու դրանց անօրէնութիւնը, արարմուն-
քը լուս աշխար հանիւմ, վուր էգէբա համսօնիւր
գլթնիւմ ու ձեռը-ձեռին տուած, միւր բաղքիցը
հեռու փախցնինք էտ տեսակ լրբութիւներին:

Գիգիւմ կու բեզրէիւր, Սօվանէ ջան, ու ջէր
էստով բաւականացի:

Շատ շուտով կու գրիւմ քիզ, միւր էստղանցի
դօխտուրների ու ինջիներների խաբարնիրը, ու
մէկ էլ էն հարուստի արարմունքը, վուր էստի
լաւ անում ունէր ու հիմի էգթէնը էկաւ:

Կու գրիւմ, էս ամառը ինչ որ կու տէհնիւմ
Միմօղա ու Ապօլոններում, Վերա, Դիդուբէ ու
Օրթաճալում:

Քեզնից աւել էլ սրտացաւ բարեկամ խօմ
չունիւմ ու բալքամ էլի դուն մխիթարիս:

Բարովի ճանանչներիս, մնաս բարով, համ-
փուրում իմ քու միւսօն քսած ճակատդ:

Քու հէքիւմ Նիկօլի տղայ—ԳէվՕ.

Ձ թիբաթվէ,
Թիփիլդ:

«Մ Օ Դ Ա Է Բ Ա»

Ինչ իմ ասում, ախպրտիք ջան,
Թիֆլիզումը նուր խաբար կայ.
Ինչ տեսակ մեխքեր էլ անին,
Պիտի ասին—Մոգա է քա:

Էս միւր քաղքի աղջկիւրքը,
Ի՞նչ ին անում, վայ միւր միխքը.
Էլ փափուճնիր նրանք չին հազնում,
Սեռի տուֆլիք—Մոգա է քա:

Երբ որ միջի մարդն է գալի,
Աղջիկն է առաջ վազ տալի,
—Աբա, ո՛ւմ անունն իս տալի,
Ձէ վուր էտ էլ—Մոգա է քա:

«Կալատողը ի՞նչ իմ բանն է,
Ան բաղալն իմ ինչ լայիղ է,
Միկիտնի անունը մի տայ,
Ձինովնիկը—Մոգա է քա»:

«Սլեսարը սև ձեռներ ունէ,
Բաղալն էլ լէն շարւալ ունէ,
Պարշովնիկը կակարդ չունէ,
Գալուստիկը—Մոգա է քա»:

Օլիշկէն է խիստ նազանի,
Կոտրուիլը դուր է գալի,
Մինք խօմ գիդինք չի սազ գալի,
Ինքն ասում է—Մոգա է քա:

Նատոն վուտով չէ ման գալի,
Թաղա ֆայտոն պիտի ըլի,
Գորգօլաճներն էլ ռեզինի,
Էնդուր, վուր էտ—Մոգա է քա:

Սօնէն խիստ անքոց է տալի,
Կարգէթը խիստ հուփ է տալի,
Մազօլեմէն կաղ է տալի,
Էլի ասինք,—Մոգա է քա:

Քեթոն կուլի քսան տարեկան,
Մօրը հարցնիս-տասը չկայ,
Ու կանչումին նրան «Քեթիչկա»
Էս «իշկէքն» էլ—Մոգա է քա:

Փէփօն իրա բաղալ մարդու
Ուսին էպօլէտ է շինում:
Ձէն մի տայ, վունչիչ մի հարցնի,
Թէ չէ կասի—Մոգա է քա:

Էս անիծուած մողի խաթրու,
Մարթ ու կնիկը կռիւ ին գցում,
Իրար խփում, գլուխը ճղում,
Հարցնիս-կօսին—Մոգա է քա:

Մեր Օլիչկէն էսօր փսակեց,
Մի դօչաղ չինովնիկ ուզեց,
Մէկէլ օրը ջուխտ տղայ բերեց,
Այ, պերվի սօրտ—Մոգա է քա:

Աթալ-փաթալ վազ իմ տալի
Կնգաս համա դօխտուր բերիմ,
Դօխտուրն կնգաս դօստ դուս էկաւ,
Ինձ դուս արին—Մոգա է քա:

Ամեն օրուայ լիստօկի մէջ,
Կարդում եմ ես բաներ էսպէս,
Поднято такой младенецъ,
Էս «սլուչիէն» էլ—Մոգա է քա:

Պրիկաշիկ իս բազաղխանում,
Շաբթէնը մի օսկի իս ստանում,
Թաքաւորի պէս իս ապրում,
Ծլկացնիլը—Մոգա է քա:

Որտեղ թոկից փախածնիր կան,
Դիփ էլ հաշւապահ դուս էկան,
Ուրիշ բան չին լայիղ անում,
«Բուղանտէրը»—Մոգա է քա:

Սապօժնիկն էլ դերասան է,
Կազմարարն էլ դերասան է,
Գործը թողած բեմն ին վազում,
Հէնց գիդում ին—Մոգա է քա:

Նոր վերադարձած բժշկին,
Հիւանդի մօտ են հրաւիրում,
Ինչ է մութն է, էլ չի գնում.
«Ինչկի վիցը»—Մոգա է քա:

Բաղալ Դէվօն պսակեցաւ
Ինստիտուտի աղջիկ առաւ,
Ագինաչկով Թէլէթ տարաւ,
Վայ քու տղիս—Մոգա է քա:

Տրոստ ու անկոց ու շիապով
Կոխտա շիկում ման իս գալիս,
Թէ ձեռներիդ ձեռնոց ունիս,
Մամիդ ասա—Մոդա է քա:

Փուռդ դարդակ ղրղրում է,
Վուտնամանդ հոգևարք է,
Զիբդ էլ ծակ—գրօշ չկայ,
Մայինց ասա—Մոդա է քա:

Մարդը տանը կէս գիշերին,
Աչքը ճամփի վրայ է գցի,
Կնիկը ջէր չէ վերադարցի,
—Ափիցրի մօտ — Մոդա է քա:

Ղուրթ է կնիկն էլ է լաց լինում,
«Ասմէ, քաջան, շուտով բաց թող,
«Մարդս, ասմէ, կու չարանայ»,
—Զանը դուրս գայ—Մոդա է քա:

էս անիծւած , ,մոդա է քա՛ն
Ո՞վ լուս գցից բանիր էսքան.
Ախր չի՛նի, դա՛լա տարան.
Վուրդի գնամ—Մոդա է քա:





ԳԻՆԸ ՄԻ ՇԱՅԻ.

Դիմել հայ գրախմբներին կամ

«ԷՆՈՅՈՒՆ» Տպարանում Լ. Պողոսեանին.

ՀՀ Ազգային գրադարան



NL0369930

60262